

**ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ
(ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ) ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ Ա. ԲԱԿՈՒՆՅԻ
ԵՐԿԵՐԻ ԼԵԶՎՈՒՄ**

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՄԱԼՅԱ

*Բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատող
Էլիհուստ՝ amalyabarseghyan42@gmail.com*

Շարահյուսական քերականական կարգն ունի մի շարք առանձնահատկություններ՝ պայմանավորված ինչպես ենթակայի և ստորոգյալի արտահայտության իմաստային յուրահատկությամբ, այնպես էլ խոսողի վերաբերմունքով: Հավաքական գոյականներով արտահայտված ենթական, որպես կանոն, պահանջում է եզակի թվով դրված ստորոգյալ: Եզակի թվով ենթական, որն ունի թվականով արտահայտված որոշիչներ, պահանջում է և՛ եզակի, և՛ հոգնակի ստորոգյալներ՝ կախված ենթակայի առկայացումից (որոշյալ հոդով կամ առանց նրա):

Բանալի բառեր՝ շարահյուսական կապակցություններ, համաձայնություն, ենթակայի և ստորոգյալի կապակցություն, բակառություն:

Քննենք ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը և նրանց դրսևորումները Ա. Բակունցի երկերի լեզվում: Ենթակայի և ստորոգյալի կապակցությունը կազմում է նախադասության կառուցվածքային հիմքը: Պատահական չէ, որ նախադասության քերականական կարգերը հիմնականում հանդես են գալիս ենթակայի և ստորոգյալի կապակցության մեջ: Այդ կարգերից է համաձայնությունը, որը, որպես քերականական կարգերը, այնքան կարևոր է, որ, այն բնականաբար, շարահյուսության ամեն մի դասագրքում էլ քննվել ու քննվում է: Ենթակայի և ստորոգյալի համաձայնությանը անդրադարձել ենք նաև մենք¹:

Համաձայնությունը նախադասության անդամների կապակցման եղանակ է, այն դրսևորվում է նրանով, որ իրար հետ կապված անդամներն

¹ Տե՛ս Ա. Բարսեղյան, Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը ժամանակակից հայերենում, ՀՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.» ամսագիր, Ե., 1990, հմ. 6, էջ 70-76:

ստանում են միևնույն քերականական կարգերը, ուրեմն և՛ համապատասխան քերականական ձևավորումը: Հին հայերենի համեմատությամբ ժամանակակից հայերենում կապակցման այս եղանակը զգալի չափով սահմանափակել է իր ոլորտը: Ժամանակակից հայերենում ամենաբնորոշը ենթակայի և ստորոգյալի համաձայնությունն է. դրա հիմքում ընկած է այն իրողությունը, որ ստորոգյալը ենթակայի էության կամ նրա որևէ էական հատկանիշի դրսևորումն է, որը ենթակային է վերագրվում դեմքով: Եվ բնական է, որ այդ կապակցության բաղադրիչները՝ ենթական և ստորոգյալը, պետք է համապատասխանեն միմյանց: Դրա հետ միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ համաձայնությունն ունի շատ յուրահատկություններ, տատանումներ՝ պայմանավորված տարբեր հանգամանքներով:

Ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության ամենաընդհանուր և հայտնի օրինաչափությունն այն է, որ եզակի ենթակայի հետ սովորաբար դրվում է եզակի ստորոգյալ, հոգնակի ենթակայի հետ՝ հոգնակի ստորոգյալ: Ինչպես՝ «Արևը բավական բարձրացել էր, ցողի կաթիլները գոլորշիացել» (էջ 149):

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հավաքական գոյականները, որոնք ձևով եզակի են, սակայն ունեն բազմակիության իմաստ, նրանց համաձայնությունը որպես օրինաչափություն կատարվում է ձևային կողմով՝ այսինքն՝ ունենում են եզակի թվով ստորոգյալ: Օրինակ՝ «Բազմությունը լուռ լուռ էր» (էջ 156):

Հավաքական գոյականով արտահայտված եզակի ենթակայի հետ հոգնակի ստորոգյալի գործածությունը, որ անցյալում հանդիպում էր հատկապես գեղարվեստական խոսքում, բարբառայնության արտահայտություն է և գրական հայերենի արդի փուլում կանոնական չէ: Աբեղյանը այս երևույթն անվանում է բակառություն¹:

Ենթակայի և ստորոգյալի համաձայնության հարցում զգալի դեր է կատարում թվական որոշիչը: Մեկից բարձր թվական որոշիչով ենթակա գոյականական կապակցությունը կարող է ունենալ և՛ եզակի, և՛ հոգնակի ստորոգյալներ, ինչպես նկատել են Մ. Աբեղյանը, Գ. Զահուկյանը, Վ. Առաքելյանը²: Օրինակ՝ «Մամռոտ քարի վրա երկու փետուր էր ընկած, դեղնագույն – սև

¹ Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, Ե., 1974, էջ 408:

² Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, , հ. 2, Ե., 1974, էջ 410: Գ. Զահուկյան, *Ժամանակակից հայերենի լեզուական հիմունքները*, Ե., 1974, էջ 418: Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն*, Ե., 1958, էջ 244-250:

պատերով, իսկ թփի չոր ճյուղերին՝ արյան կաթիլներ» (էջ 81): Թվական որոշիչով որոշյալ առումով եզակի գոյականի հետ սովորաբար հոգնակի ստորոգյալ է լինում: Օրինակ՝ «Ոչ միայն զգեստից, այլև ձի նստելուց երևում էր, որ երկու *ծիավորը* քաղաքի *մարդիկ են*» (էջ 180):

Բայց ժողովրդախոսակցական լեզվում հանդիպում են այնպիսի կառույցներ, որոնցում մեկից բարձր թվական որոշիչը ունենում է անորոշ առումով ենթակա, որի հետ գործածվում է հոգնակի ստորոգյալ: Օրինակ՝ «*Երկու փեղուր* օրորալով վայր ընկան, աշնան դեղին տերևների նման» (էջ 79): «Մի երկու օր անց քաղաքից *երկու մարդ եկան*, թևերին կարմիր շորի մի կտոր կապած» (էջ 37):

Որոշ բայերի հարակատար դերբայը գոյականաբար գործածվելիս կարող է ունենալ հավաքական իմաստ, այդ դեպքում նրա հետ դրված ստորոգյալը և նրա գոյական վերադիրը կարող են դրվել հոգնակի թվով: Օրինակ՝ «Քանի ճրագ են վառում, էնքան էլ տուն կա: *Մնացածը արջաքներ են*» (էջ 257): *Մնացածը* գոյականաբար գործածվելիս՝ ոչ հավաքական իմաստով կարող է ունենալ նաև եզակի թվով դրված ստորոգյալ: Դրսում *մնացածը թրջվել էր* անձրևից:

Ենթակայի և ստորոգյալի կապակցության մեջ կան համաձայնությանը վերաբերող շատ այլ ուշագրավ երևույթներ: Դրանցից հատկապես նշելի է այն, որ եզակի ենթակայի հետ, որ նաև հավաքական գոյական չէ, օրինաչափորեն դրվել է հոգնակի ստորոգյալ, այդ թվում՝ հոգնակի ստորոգելիով: Այսպիսի կապակցությունում ենթակայի դերում հանդես եկող գոյականը կամ այլ խոսքի մասով արտահայտված բառը, չլինելով հավաքական, ձեռք է բերում հասկացական ծավալի ընդլայնում, և դա հնարավորություն է տալիս, որ ստորոգելին և առհասարակ ստորոգյալը նրա հետ կապվի հոգնակի թվով: Այսպես՝ «Նա շատ դանդաղ էր մտքին ասում, ասես գետնի *նախշը* իր *մտքերն էին* և զգույշ ջնջում էր այն, ինչ որ չէր ուզում ասել» (էջ 429):

Բակունցի երկերում հաճախ ենք հանդիպում *կա* ստորոգյալի և ենթակայի համաձայնության տատանումների: Օրինակ՝ «Գյուղի վերևում հին *քարայրեր կան*, որոնց շվաքում նախիրից ետ արած հորթեր են նստում» (էջ 103): «Ուր կուսական *անտառներ կան*, անտառներում նույնքան կուսական արջեր, եթե կուսական նշանակում է մարդու երես չտեսած» (էջ 102): «*Ծով կար* նրա մտքում» (էջ 141): «Տեսեք, եթե *հայ կա*, կանչեցեք դուրս» (էջ 612):

Բայց՝ «Քաղաքից եկողները պատմում էին, որ ամեն տեղ մեծ *թղթեր կա* փակցրած, փողոցներում մարդիկ իրար տեսնելիս կռվի մասին են խո-

սում» (էջ 37): «Նրա ամբարում հլա ինչեր կա» (էջ 29): «Սենյակներում գորգ ու կարպետ կա, պատերին խալի, երկու լավ մահճակալ, սպիտակ պղնձից ինքնատեռ, ափսեներ ու բաժակներ» (էջ 93): «Այդ ճանապարհներով Լևոնն ուղարկում է բազմաթիվ մեքենաներ դեպի գյուղերը և նրանց դաշտերը, որտեղ կա ջուր, արև և քրփինք» (էջ 32):

Ժողովրդախոսակցական ոճի դրսևորում պետք է համարել հոգնակի կամ բազմակի ենթակաների հետ եզակի ստորոգյալի գործածությունը: Սա գրական լեզվի կանոնների խախտում է:

Օրինակ՝ «Ֆետրե գլխակով մարդը կռացավ, պոկեց մեկը և դրեց տետրի այն թերթի արանքը, որի վրա նկարված էր եռոտրանին և բարակի-րան կինը» (էջ 141): «Նրա ականջին էր հասնում անկապ խաբարներ, լսում էր անհասկանալի խոսքեր» (էջ 42): «Մնացել է եղեգնյա կտորը և ջահերի նման կախված եղեգները, որ ճոճվում են, երբ բացվում է դուռը» (էջ 247):

Ինչպես հայտնի է, բազմակի ենթակաների հետ սովորաբար դրվում է հոգնակի ստորոգյալ: Երբ բազմակի ենթակաները իմաստով մոտ են և միասին արտահայտում են մեկ հասկացություն, ստորոգյալը դրվում է եզակի թվով: Օրինակ՝ «Մի անհուն դառնություն և կսկիծ ավերեց նրա չքնաղ օրը» (էջ 84):

Ստորոգյալը կարող է դրվել եզակի թվով, երբ բազմակի ենթակաները իմաստով մոտ չեն, ինքնակա առարկաներ են, սակայն համատեքստում ունեն շատ սերտ իմաստային կապ: Օրինակ՝ «Դիլան դային էլ կին առավ, բայց հիշողության մեջ հավիտյան անջինջ մնաց Սոնան, հնձանը, լաջվարդ շապիկը, արծաթ սուրմաները» (էջ 80): Այստեղ բազմակի ենթակաների հիշողության հետ կապված լինելով է պայմանավորված ստորոգյալի եզակի թիվը:

Երբ ստորոգյալը բազմակի ենթականերից նախադաս է, և գործողությունը կատարվում է միաժամանակ, ստորոգյալը սովորաբար դրվում է եզակի թվով: Օրինակ՝ «Գվկում էր անտառը, ծորը» (էջ 480):

Երբ ստորոգյալը բազմակի ենթականերից նախադաս է (նաև հետադասի դեպքում), գործողությունը կատարվում է անջատ-անջատ, ոչ միաժամանակ, այլ հաջորդաբար, ստորոգյալը սովորաբար դրվում է եզակի թվով: «Բայց պայթեց պատերազմը, եղավ զորաժողով, բռնություններ» (էջ 149): «Խառնվել է գլխով հին ու նորը» (էջ 286): «Թեկուզ հեղեղը վնասել էր գյուղին և մարդիկ դառնացած էին այդ առավոտ, բայց և այնպես արևի ելքը,

նրա առատ ջերմությունն ու փայլը մոռացնել տվավ գիշերվա սարսափը» (էջ 492):

«Եվ այսպես կորչում է մեր երիտասարդությունը, մեր ժամանակը և կորչում ենք մենք» (էջ 573): «Քանի ոտքեր, քանի՛ սմբակներ և անիվներ անցել են այս կավի վրայով, ինչքա՛ն է ծեծել ձյունը, և՛ հողմը, և՛ արևը, և՛ անձրևը» (էջ 245):

Մեր կարծիքով բազմակի ենթակաների հետ նախադաս ստորոգյալը նույնպես ցանկալի է դնել հոգնակի թվով՝ հանուն միօրինակության և պարզության:

Հոգնակի կամ բազմակի ենթակայի հետ առարկա ցույց տվող բառով արտահայտված ստորոգելին կարող է դրվել եզակի կամ հոգնակի թվով: Ստորոգելին դրվում է հոգնակի թվով, երբ հոգնակի կամ բազմակի ենթակայի ստորոգելի մեջ ընդգծվում է հոգնակիության գաղափարը: Նման դեպքերում ստորոգելին կարող է ունենալ ածական որոշիչ: Օրինակ՝ «Նրանք մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր նույնքան աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանիշակը» (էջ 75): Հոգնակի կամ բազմակի ենթակայի հետ ստորոգելին դրվում է եզակի, եթե նրանում շեշտվում է գնահատման իմաստը. «Մենք մարդ ենք, չենք կարող նրանց նման վարվել»: Սա հետաքրքիր է այն առումով, որ թվի գաղափարով արտահայտվում է խոսողի գնահատողական վերաբերմունքը:

Թվային համաձայնություն գոյություն չունի, եթե ստորոգելին արտահայտված չէ գոյականով կամ գոյականաբար գործածված բառով: Օրինակ՝ «Ինչու այդքան ջերմ էին մայրները» (էջ 157): Ինչպես երևում է օրինակից, հոգնակի ենթակայի հետ ածական ստորոգելին չի համաձայնել, մնացել է անփոփոխ, համաձայնությունը իրացվել է դիմավոր բայի միջոցով, այն է՝ *էին*, քանի որ ածականին բնորոշ չէ թվի քերականական կարգը:

Բակունցի երկերում երբեմն հանդիպում ենք հոգնակի կամ բազմակի ենթակաների հետ ածական ստորոգելի դիմավոր բայի անհամաձայնության դեպքերի: Օրինակ՝ «Կարացի ոչ, աչքերը հերսոյ էր» (էջ 71): «Աշնան խաղաղ օրին նրան հաճելի էր և՛ սիմինդրի տերևների *խշողը*, և՛ վազերի *օրորը*, և՛ հնձանի դռնակի *երգը*» (էջ 73): «Առավոտ կանուխ ջրի *գնալը*, կովերի *կթելը* Մինա բիբուն *ավելի հեշտ թվաց*» (էջ 82):

Ուշագրավ է մի շարք դերանուն ենթականների ու ստորոգյալների համաձայնությունը՝ պայմանավորված այդ դերանունների իմաստային յուրա-

հատկությամբ: Միայն հոգնակի իմաստով գործածվող դերանուններ են՝ *բռ-լորը, ամենքը, միմյանց, իրար, մեկմեկու/մեկմեկի* և այլն:

Ինչպես հայտնի է, *ամենը* որոշյալ դերանունը, որոշիչ հոդ ստանալով, առարկաների հավաքական ամբողջություն է ցույց տալիս և ունի հանրական իմաստ: Օրինակ՝ «Այդ *ամենը* դեռևս անախորժ *աղմուկ են*, նման այն աղմուկին, որ արձակում է նվագախումբը վարագույրից առաջ» (էջ 393): «Մարցա ջուրը, որ գարնանը ուռչում էր, ավերից դուրս գալի, իսկ ամառը բարակում այնքան, որ հորթերն էլ էին անցնում,- այս *ամենը* մի խորհուրդ *ունեին*, մի ներքին իմաստ, որ ոչ միայն վաղուց ծանոթ էր նրան, այլև ինքը մերվել էր այդ իմաստի հետ» (էջ 435): «Այս *ամենը* մայիսյան արևի տակ *փայլվում էին, շլացնում* և հաղթական երթի *նմանություն տալիս*» (էջ 428):

Բայց՝ «Այդ *ամենն* այնպես *անակնկալ եղավ*» (էջ 633): «Երկու կողմից բարձր ու կապույտ ժայռեր ու մի ժայռ այնքան է կռացել ջրի վրա, որ ալիքները գալիս ու դեմ առնում և ինչ որ գտնում են՝ տերև, ճյուղ, խոտ,- այդ *ամենը* պղտոր փրփուրի հետ *դեմ է առնում* ժայռին» (էջ 439): «Այդ *ամենը* միանգամից և միակերպ *չէր շինված*» (էջ 440): «Նրանք կամուրջի վարձ էին հավաքում, բուրդ, ոչխար, դրամ, և այդ *ամենը գնում էր* գինու և զվարճության» (էջ 411):

Կամ՝ «Այդ *բոլորն* արդեն *կատարվել էր*, և ահա աշնան մի անձրևոտ օր ձիերը դարձնում էին դեպի հայրենի գոմը» (էջ 565):

Ենթակայի և ստորոգյալի համաձայնության հարցում հաճախ մեծ դեր է կատարում կառույցի ձևային կողմը: Եթե եզակի ենթակայի գործողությա-նը մասնակից է նաև մեկ ուրիշը, և դա արտահայտված է սեռական հոլովածի և *հեք* կապի միջոցով, ստորոգյալը դրվում է եզակի թվով¹: «Այդ օրը ես *նրա հեք* գոմ *գնացի* կովերին խոտ ու դարման տալու» (էջ 155): Թեև *հեք* կապով կապվող բառով նշվել է գործողություն կատարող այլ առարկա (կամ առարկաներ), բայց դա չի ազդում ենթակայի և ստորոգյալի համաձայնության վրա, քանի որ այդ առարկայի անունը չի դրվում ենթակայի պաշտոնով և ուրեմն չի ազդում ենթակայի թվային հատկանիշի վրա: Այս հարցում դեր է կատարում այն տրամաբանական հիմունքը, որ միասնության պարագայի ցույց տված առարկան նույնպես կատարում է գործողություն (ինչպես ենթական), թեև լրացում է: Բակունցի երկերում ստորոգյալը նման դեպքերում երբեմն դրվում է հոգնակի թվով, որը ճիշտ չէ: Այսպես՝ «Աչքն

¹ Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի (մաս Ա, Բ, Գ), Թիֆլիզ, 1894, էջ 192:



անգղների *պտույտի հեպ էին*, նրանց թևերի հզոր շարժումի, կեռ ու արնագույն *կտուցների հեպ»* (էջ 137): «Այդ ժամերին *նա* մտաբերում էր և Սալթուն, հիշում էր փոքրիկ այն աղջկան, *որի հեպ* մի ամառ խուրձ *էին կրել»* (էջ 477):

Ամփոփելով նշենք, որ համաձայնության կարգը, լինելով շարահյուսական, հանդես է բերում տարբեր յուրահատկություններ՝ պայմանավորված թե՛ ենթակայի ու ստորոգյալի արտահայտության միջոցների իմաստային հատկություններով, թե՛ երբեմն խոսողի վերաբերմունքով:

MANIFESTATIONS OF TYPES OF SYNTACTIC COMBINATIONS IN THE LANGUAGE OF WORKS BY A. BAKUNTS

BARSEGHYAN AMALYA

PhD in Philology,

Researcher at the Language Institute after Hr. Acharyan, NAS RA

e-mail: amalyabarseghyan42@gmail.com

The grammatical category of coherence which is of syntactic nature provides a set of features both due to the semantic properties of means of expression of a subject and predicate and sometimes by the attitude of the speaker.

Subject, expressed by a collective noun, as a rule, demands a predicate in singular. Subject in singular, having an attribute expressed by numeral, demands a predicate both in singular and in plural depending on actualization of subject (application with a definite article or without it).

Key words: *syntactic connections, accord, combination of subject and predicate, synesis.*



ПРОЯВЛЕНИЯ СИНТАКСИЧЕСКИХ СПОСОБОВ СВЯЗИ (СОГЛАСОВАНИЕ) В ЯЗЫКЕ ПРОИЗВЕДЕНИЙ А. БАКУНЦА

БАРСЕГЯН АМАЛИЯ

*Кандидат филологических наук,
Научный сотрудник Института языка имени Р. Ачаряна НАН РА
электронная почта: amalyabarseghyan42@gmail.com*

Грамматическая категория согласованности, являющаяся синтаксической, обеспечивает множество особенностей, как из-за смысловых свойств средств выражения подлежащего и сказуемого, так, иногда, и от отношения говорящего.

Выраженное собирательным существительным подлежащее, как правило, требует сказуемого в единственном числе. Подлежащее в единственном числе, имеющее определение, выраженное числительным, требует сказуемого и в единственном, и во множественном числе, в зависимости от актуализации подлежащего (употребление определяющим артиклем или без него).

Ключевые слова: синтаксическое сочетание, согласование, сочетание подлежащего и сказуемого, синезис.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 12.08.2021թ.:

Հոդվածը գրախոսվել է 15.09.2021թ.: